

քեռորդին ողջ-առողջ գտնել, այլեւ զարմանքով կը տեսնէին, որ երկուքն էլ տարիներով մեռած համարուելէ վերջ՝ հիմա փառազարդ ճակատ մը կը ցցնէին, վասնզի Վասակ պատրիկ Սուրենի քաջութիւնը կը գովեր եւ Թեոդորոս զգրիգոր բարի օրինակ հայ երիտասարդութեան ցոյց կ'ուտար իւր քաջութեան հաւասար իմաստութեան եւ գիտութեան համար:

Իսկ երբ ընթրիքը վերջացաւ, Թեոդորոս ժողուեց նախարարաց գլխաւորքը, հարցուց իրենց կարծիքը, եւ վերջապէս միաբան միախորհուրդ որոշուեցաւ թողուլ Կարնոյ մօտ քանի մը հազար զօրաց խումբ մը եւ յարձակիլ Պոնտոսի կողմն յունաբնակ գաւառաց վրայ: Եւ ահա այդ յաղթող բանակը կը շարժէր, կ'իջներ Բարձր Հայոց գավառներէն, կը զարներ, կավարեր, բոլոր ծովեզրը կառնուր ինչպէս եւ Տրապիզոն քաղաքը, եւ կը դառնար մեծ աւարաւ եւ գերութեամբ:

Թեոդորոս արաբացի խումբը ընծայուք լի կը դարձներ առ ամիրապետն եւ ինք հրաւիրուած կ'երթար Դամասկոս: Մաւիաս մեծարեց զինքն «Ոսկեթել եւ Ոսկեղէն ընծայուք եւ դրօշակոք», տուաւ իշխանութիւն Հայոց, Վրաց եւ Աղուանից եւ մինչեւ ճորայ պահակին վրայ:

Գարնան գեղեցիկ օրերով Ռշտունեաց Ոստանը մեծ հանդէս էր կրկին հարսանեաց Գրիգոր Մամիկոնեանի Ռշտունեաց Օրիորդին հետ՝ եւ Վարդի՝ Սիւնեաց Օրիորդին հետ: Վասպուրական եւ բոլոր Հայաստան երջանիկ օրուան արշալոյս մը հասած կը կարծէին, վասնզի միաբանութիւն կը տիրէր հայ նախարարաց մէջ, եւ այնպէս կը համարուէր թէ թշնամի չի կար, որ համարձակէր ոտնակոխ րնել հայուն հայրենիքը:

Բայց երբ հաստատ օրինաց եւ սահմանափակ իշխանութեանց վրայ չէ ամրապնդեալ երկրի մը վիճակը, ոչ երբեք երջանկութեան պէտք է սպասէի դիպուած մը, պարագայ մը, արկած մը, որ ոմանք բախտ անուանած են, ամէն բան վեր ի վար կրնայ ընել եւ ամէն յոյս եւ ջանք ի դերել հանել:

Այսպէս եղաւ նաեւ Թեոդորոսի ծանր եւ երկար հիւանդութեամբ:

Ենք ժողուեց հայ նախարարքը, դրաւ իրենց առաջ երկրին վիճակը եւ երկու մեծ տէրութեանց՝ յունաց եւ արաբաց տկար ու զորաւոր կողմերը, յայտնեց թէ ոչինչ կը համարէր ամիրապետին իրեն տուած իշխանութիւնը եւ ամենեւին գոհ չէր է թէ ինք աւելի սիրով յանձն կառն ուր հնազանդիլ ազգային իշխանութեան մը, զօր նախարարք իրենց ազատ կամօք ընտրէին, միայն թէ այդ իշխանու-